



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 13

ք. Արտաշատ

< 25 > 02 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարզի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի հունիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> N 68 որոշման հավելվածի 58-րդ տողում <<Մկրտչյան Լիլիկ>> բառերը փոխարինել <<Գևորգյան Ներսեան>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ